գանայ բարեպաշտի լեալ, և այսմ վկայ օրէնքն՝ զոր եդ Վաչագան արքայ ամենայն եպիսկոպոսօքն Աղուանից, և գրէ այսպէս. «Ես Վաչագան արքայ Աղուանից, և Նուփհաղիշոյ արքեպիսկոպոս Պարտաւայ». և յետ այսորիկ այս անուն ո՛չ գտանի ի կարգ համարոյ եպիսկոպոսացն, այլ մեք սապէս և գտաք եդաք։ Եւ ապա տէր Մատթէ, տէր Սահակ, տէ՛ր Մովսէս, տէր Պանտ, տէր Ղազար։ Եւ ապա սուրբն Մանուէլն Գրիգորիս, որդի մեծին Վրթանայ, եղբայր Յուսկանն, թոռն սրբոյն Գրիգորի զոր առաքեաց մեծ արքայն Հայոց Տրդատ, և սպանեալ եղեւ ի դաշտին Վատնայ վասն վկայութեան Աստուծոյ, և բերեալ թաղեցաւ յԱմարաս։ Յետոյ Նշխարքն գտեալ եղեւ յաւուրս Վաչագանայ, ընդ որս և նշխարք սրբոյն Զաքարիայի հօրն Յովհաննու Մկրտչի, և Պանդալէիմոնի մեծ վկային Քրիստոսի, որ վկայեաց ի Նիկոմիդիա քաղաքի յաւուրս Մաքսիմիանոսի, զոր տարեալ էր սուրբն Գրիգորիս ընդ իւր։ Եւ ապա տէր Զաքարիայ, տասն՝ տէր Դաւիթ, մետասան՝ տէր Յովհան, որ և Հոնայն եղեւ եպիսկոպոս, երկոտասան՝ տէր Երեմիայ, յաւուրս սորա արար Մեսրոպ գիրս Աղուանից մեծաւ ջանիւ. երեքտասան՝ Տէր Աբաս։ Առ սա գրեցին ի ժողովոյն Դվնայ՝ ասել զսորբն Աստուած, անմահ և խաչեցար, և ասել՝ մի բնութիւն Աստուածութեան և Մարդկութեանն, չորեքտասան՝ տէր Վիրոյ ամս երեսուն երեք։ Սա զբազում ամս ի դիպահոջ լեալ ի դրան Խոսրովու Պարսից արքայի, և յետ մահուան նորա ազատեալ, եկն յերկիր իւր։ Սա թափեաց զգերեալսն Հայոց՝ Վրաց և Աղուանից ի Նաթախազրէ, յորդւոյն Զեբուխաքանայ, որ գերեաց զաշխարհս։ Սա շինեաց քաղաքս հինգ յանուն Նաթայ՝ զՆաթառ, զՆամքոռ, զՆաքի, զՆրուան, զՆամախի, զՆապօրան։ Տէր Զաքարիա ամս հնգետասան։ Սա աղօթիւք իւրովք ապրեցոյց զմեծ քաղաքն Պարտաւ ի գերութենէ։ Տէր Յոնան՝ ամս քսան և հինգ, տէր Ուխտանէս՝ ամս երկոտասան։ Սա անէծ զնախարարս Աղուանից վասն ազգաշաղախ խառնութեան, և սատակեցան ամենեքեան։ Տէր Եղիազար՝ ամս վեց, տէր Ներսէս՝ ամս եօթն և տասն։ Սա մինչ եպիսկոպոս էր Գարդմանայ՝ հաւանեցոյց զկին ոմն Սպրամ անուն, կի՛ն իշխանին Աղուանից՝ զի զամենայն ինչ ըստ կամաց նորա գործեսցէ. և էր կինն խմորեալ յաղանդն Քաղքեդոնի, և